Հասարակաց պարտքերը հասնում էին.

	Ֆրանկ.
Ֆրանսիային	36.000.000.000
Անգլիային	17.000.000.000
Գերմանիային	17.000.000.000
Աւստրօ—Հունգարիային	15 000 000.000
Իտալիային	14.000.000.000
Սպանիային	7.000.000.000
Թուրքիային	5.000.000.000
Փորթուգալիային	3.000.000.000
Նիդերլանդիային	2.000.000.000
Բելգիային	2.000.000.000

Արհեստների արդիւնքը հասնում էր (չհաշուած երկրագործական արդիւնքը).

	Ֆրանկ.
Անգլիա	25.000.000.000
Գերմանիա	13.000.000.000
Ֆրանսիա	13.000.000.000
Ռուսիա	8.000.000.000
Աւստրիա	8.000.000.000
Իտալիա	4.000.000.000
Բելգիա	4.000.000.000
Զուիցերիա	2.000.000.000
Սպանիա	15.000.000.000
Ամերիկայի միացեալ-նահանգները	30,000.000.000

Ժողովրդի նիւթական հարստութիւնը հասնում էր.

	Ֆրանկ.
Անգլիա	280.000.000.000
Ֆրանսիա	240.000.000.000
Գերմանիա	150.000.000.000
Աւստրօ—Հունգարիա . .	100.000.000.000
Ռուսիա	50.000.000.000
Իտալիա	50.000.000.0 0
Բելգիա	40.000.000.000
Նիդերլանդիա	25.000.000.000
Զուիցերիա	12,000,000,000
Դանիմարքա	12,000,000,000
Միացեալ նահանգներ . .	350,000,000,000

Իւրաքանչիւր քաղաքացու ընկնում է.

	Ֆրանկ.
Անգլիայում . . .	7,000
Ֆրանսիայում . .	6,300
Բելգիայում . . .	6,150
Հոլանդիայում . .	5,000
Զուիցերիայում .	3,300
Գերմանիայում . .	3,000
Աւստրիայում . .	2,300

Հ. Յ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Հարկը թեթեւացնելու միջոց. Իտալիայում մտադրութիւն կայ ազնուականութեան տիտղոսների սակը բարձրացնել, ժողովրդեան հարկը թեթեւացնելու համար. Այսուհետեւ տուրք պիտի հաւաքուի՝ իշխանական տիտղոսի համար 40.000, դքսութեան համար—30.000, մարկիզութեան համար—25.000, կոմսութեան համար 20.000, բարոնութեան համար 12.000, իսկ հասարակ ազնուականութեան համար—5000 ոսկի. Տուրքի հինգ մասից երեքը միայն կ'առնուի այն դէպքում, երբ տիտղոսը գնուի առանց ժառանգեցուցանելու իրաւունքի.

***

Աճում թմրած վիճակում:—Լոնդոնի պարտիզպաններից մէկը հետաքրքրական դիտողութիւններով համոզուել է, որ մարդու և կենդանեաց պէս բոյսի համար էլ հարկաւոր է քուն և հանգստութիւն, որպէս զի լաւ աճէ. Նա մտածեց, թէ եթէ բոյսը քնելու ընդունակ է. ապա ուրեմն նորան կարելի է նաև թմրեցնել, ուստի և փորձեց արմատն ու տերևների բողբոջը ենթարկել քլորակերպի գոլորշիների ազդեցութեան. Հետևանքը անսպասելի էր. դանդաղ աճող բոյսի ծիլը երկու փորձից յետոյ սկսեց զարմանալի արագութեամբ զարգանալ. Այս պարտիզպանը իւր մարգերի մէջ տնկեց միատեսակ բոյսերից բազմաթիւ միահասակներ, որոնցից կէսը քլորակերպի ներգործութեամբ աճեցրեց, իսկ կէսը սովորական կերպով խնամեց. Արդէն մի շաբաթից յետոյ թմրրի ազդեցութեամբ աճողները միւսներից շատ առաջ գնացին. ամենայն օր նոցա աճումը աւելի էր զօրանում և մինչև որ առաջինները կատարելապէս զարգացան, քլորակերպով չսնուածները հազիւ թէ կիսով չափ բացուել էին.

***

Գետնի կազմութեան ազդեցութիւնը ատամների վրայ: Մի բժիշկ 20.000 նորակոչ զինուորներին քննելով՝ այն եզրակացութեան է եկել, թէ որքան խմելու ջուրը խիստ լինի (որքան գետինը աւելի կիր և մագնեզիում պարունակէ), այնքան աւելի լաւ է կազմւում ատամը: Շուեդիայում էլ վաղուց նկատուել է, որ ատամների փտութեան առհարիւրը խոտորնակ յարաբերութիւն ունի ջրի խստութեան աստիճանի հետ. Ուր որ ջուրը 0.5 աստիճան խստութիւն ունի, այնտեղ հարիւրից 97 մանուկի ատամը փտած է լինում: Իսկ ուր որ ջրի խստութիւնը 120 աստիճան է, այնտեղ հազարից միայն երեք մանուկ փտած ատամ է ունենում:

* * *

Սկսուող թոքախտի ճանաչելու նոր միջոց: — Րենտգէնի ճառագայթներով կատարուած փորձերից նշանաւորագոյնն այն է, որ այժմ հնարաւոր է դառնում վաղօրօք իմանալ թոքերի այտուցման սկիզբը, և այդպիսով մեծ չարիքների առաջն առնել. Ականաւոր բժիշկները ամիսներ շարունակ հետազօտել են երիտասարդների կրծքերը ճառագայթագիտակով. մէջքի կողմից, որովհետև այդ կողմը աւելի պայծառ պատկեր է տալիս, քան կրծքի կողմը. Մարդու ոսկրոտ լանջախոռոչի այս պատկերը՝ բժիշկները նկարագրում են խիստ հիացուցիչ կերպով. Այնտեղ ամենայն ինչ շարժում և կենդանութիւն է. առողջ մարդու թոքերը թափանցիկ են վերևից մինչև ներքև, շնչառութեան շարժումը նկատվում է կողերի բարձրանալով և ցածանալով. ապա նշմարվում է սրտի բաբախիւնը, շնչերակի ծռութիւնը, նոյնպէս և ստոծանու շարժումը, որ արտաշնչութեան ժամանակ ելնում է մինչև վեցերորդ կողը, իսկ ներշնչութեան ժամանակ իջնում է մինչև ութերորդ կամ իններորդ կողը, ուրեմն իւրաքանչիւր շնչման տևողութեան միջոցին 8—10 հարիւրամետրի չափ տարուբերվում է և յիշեցնում է մի զօրեղ օդահանի շարժում: 124 անձինք զանազան պատճառներով հիւանդանոց են մտել, բայց հասարակ միջոցներով նոցանից ոչ մէկի մէջ չի նշմարուել թոքախտ. Իսկ ճառագայթագիտակով 51 դէպքում երևեցան թոքերի կանոնաւորութեան զանազան շեղումներ. այն է՝ մի կամ երկու թոքածայրերի թափանցկութեան նուազումն, լանջաթաղանթի անթափանցկութիւն, ստոծանու շարժման բարձրութեան միակողմանի կարճումն, մի կամ նաև երկու կողմերից օդապղպջակների զարտուղութիւններ. Իսկ որովհետև առաւելապէս թոքածայրերը, շնչափողի վերջաւորութիւնները և ստոծանին կազմում են թոքախտի իսկական բոյնը, ուստի ուսումնականները եզրակացրին, թէ այդ գործարանների այդպիսի փոփոխութիւնները պէտք է համարուին թոքախտի սկզբնաւորութեան յատկանշան, որ մինչև այսօր ոչ մի հնարով չէր իմացվում: Այն հետազօտած անձինքներից հնգի մէջ յետոյ անդամատութեամբ հաստատուեցաւ թոքախտը. Եւ որովհետև թոքախտ ունեցող մարդիկ շատ անգամ խիստ առողջ տեսք են ունենում: մինչև այսօր հնար չկար այդպիսիներին ջոկել զինուորագրութեան և դպրոց ընդունելու ժամանակ, որոնք բայց և այնպէս յետոյ հարիւրաւոր մարդկանց վարակող են դառնում: Յայտնի է ուրեմն Րենտգէնի ճառագայթների բարերարութիւնը մարդկութեան համար.

* * *

Հին սերբիական աւետարանի նշխար: — Շուտով կը հրատարակուի Սերբիայի թագաւոր Ալէքսանդրի ձեռնտուութեամբ Սերբ. հին արուեստի մի չքնաղ յիշատակարան, այն է մի Աւետարանի ճշգրիտ նմանահանութիւնը, որ Աթոսի կրօնաւորները թագաւորին ընծայել են և որ ԺԲ. դարում հրաշակերտ գլխագրերով և պատկերներով գրել է արքայազն Միրոսլաւ. Այդ հազուագիւտ ձեռագրի մէջ պակասում է մի թերթ. ռուսաց քահանաներից մէկը թերթը դուրս է կտրել, որ այնուհետև Կիեւում կայսերական գրատան մէջ խնամով պահվում է. Կայսրը բարեհաճել է շնորհք անել Ալէքսանդր թագաւորին, որ նա նոյն միակ թերթի ճշգրիտ նմանութիւնը հանել տայ, որով ուրեմն նոր հրատարակութիւնը լիակատար պիտի լինի.

* * *

Պոմպէյայի յախճապակեայ նկարներից մէկը: — Անցեալ տարի այնտեղ գտնուած մի զարմանալի յախճապակեայ նկարի մասին հնախօսները շատ գլուխ են կոտրել. Նկարը ներկայացնում է եօթն ուսումնականներ ձորձերով, որոնցից մէկը, ծերունին, գաւազանով երկնագունդն է մատնացոյց անում: Առաջ կարծում էին, թէ Աթէնքի ակադեմիան է նկարուած, մէջն էլ Պլատոնը. այժմ այսպէս են բացատրում, թէ այդտեղ խմբուած են յունաց զանազան դպրոցների ներկայացուցիչները. Նոցանից երեքը առանց դժուարութեան ճանաչվում են, որք են՝ Պիթագորաս, Արիստոտէլ և Զենոն ստոյիկեանը. Իսկ ամբողջ պատկերի խորհուրդն այս է, ըստ Զիւպելլի. կաճառի պատուոյ տեղերում նստած են յունաց դպրոցների չորս հայրերը՝ Արիստոտէլը, Պիթագորասը, Պլատոնը և Սոկրատէսը. Պիթագորասը մէջ տեղն է նստած որպէս աւելի ծեր, որպէս իտալական փիլիսոփայ և այդ պատճառով որպէս զարդ այն երկրի, ուր որ արուեստագէտը իւր երկը կատարել է. Այն գունդը, որ մատնացոյց է անում Պիթագորասը, պէտք է երկնագունդ, թերևս երկրագունդ լինի, որովհետև պիթագորացիք երկիրը գնտաձև էին համարում:

Սաւոնարոլայի մահուան 400-ամեակը եւ Իտալիայի բարքերը:—Ֆլորէնցիայի արքեպիսկոպոս Ծիրանաւոր Բաուսայի թոյլտուութեամբ մի մասնաժողով կազմուեցաւ Ֆրա Ջիրոլամօ Սաւոնարոլայի մահուան 4-դ դարը տօնելու (մարտի 23-ին) համար. Այս խրողութիւնը նշանաւոր է այն տեսակէտից, որ ինքն արքեպիսկոպոսը մի դոմինիկեան է, իսկ դոմինիկեան ուխտը պաշտպանում է այն կուսակցութեան, որ հաչակաւոր կրօնաւորին սրբի տեղ է ընդունում և դարեր շարունակ մահու չափ մաքառում է հակառակորդների դէմ, որոնք Սաւոնարոլային հերետիկոս են ճանաչում. —Այս առթիւ Բոլոնիայում պատրաստուելիք տօնախմբութեան մասնակցելու կամք էր յայտնել Ջիոզուէ Կարդուչչի մեծ բանաստեղծը. Այս աւելի հաւանական էր թւում նորա կողմից մանաւանդ այն պատճառով, որ նորա համար մի նոր առիթ էր բացվում պապերի աշխարհային ձեռնձգութիւնների դէմ ընդհանրապէս, և Ալէքսանդր VI-ի դէմ մասնաւորապէս խօսելու. Սակայն Կարդուչչին յետոյ փոխեց մտադրութիւնը և մի խիստ նամակով իւր խօստումը յետ առաւ. Նա ասում է, թէ հնար չունի փառաւորել մի մարդու, որ ուզում էր Ֆլորենցիան դարձնել մի վանք, իսկ բոլոր մարդկանց՝ ապաշխարողներ. Ինչ որ վերաբերում է Ալէքսանդր VI-ին, նա արդէն դատապարտուել է. Իւր հրաժարումը պատճառաբանում է նա և այն հանգամանքով, թէ միշտ դժուարանում է իւր մենակեցութիւնը թողնել, վասն զի թէպէտ ինքը սիրում է «ընկերներին», բայց —միայն հեռուից. Բայց և այնպէս նորա գալուստը սպասվում է Հռոմում, ուր որ Թագուհու հովանաւորութեան ներքոյ գտնուած «Պալոմբէլլա» օրիորդական դպրոցում մի դասախօսութիւն պիտի կարդայ հետեւեալ բնաբանով. «Իտալիան յետաշրջութեան նեղութիւններով, բայց հզօր իւր յոյսերով».—Այս քաղաքագէտ-բանաստեղծի գրուածոց մի նոր հատոր է հրատարակուել, ուր յիշատակուած են նաև, թէ նա որպիսի մեծարանքների և յաղթանակների է արժանացել, և նոյն իսկ այն անյաջողութիւններն ու թշնամանքները, որ նա կրել է, մինչ այն աստիճան են որ լսել է. «Կորչի Կարդուչչին». Այս աղաղակին բանաստեղծը պատասխանել է. «Բնութիւնը ինձ այնքան բարձր և ընդարձակ սահման է պարգեւել, որ կորչելս անհնարին է. Եթէ ուզում էք աղաղակեցէք. Մահ Կարդուչչուն, իսկ կորչի՝ ոչ երբէք».

Ս. Մ.

Ռուս «Ծնողների ընկերութիւնը» որոշել է ձեռնարկել «Ընտանեկան կրթութեան և ուսուցման հանրագիտական բառարանի», որ պէտք է ամփոփէ իւր մէջ կրթութեան գործի բոլոր կողմերին վերաբերեալ ընտիր համառօտ յօդուածներ՝ որոշ ծրագրի և որոշ մանկավարժական հայեացքների համաձայն, և այդպէս առաջնորդ է ծնողներին, ամենակարեւոր գիտելիքները հաղորդէ, և ուղիղ ճանապարհ ցոյց տայ իրենց պարտականութիւնները դէպի իրենց զաւակները կատարելու համար. Խմբագիր ընտրուած է արդէն Կապտերեւ և հրաւիրուած են աշխատակիցներ անուանի հեղինակներից, որպիսիք են Կովալեվսկին, Կոնի, Վագնէր և այլք. Ցոյս ունին այս ձեռնարկութիւնը գլուխ հանել 3 տարուայ ընթացքում, ամէն ամէն 25 տետրակներ հրատարակելով, որոնց մէջ 80-ի չափ հարցեր կշօշափուին.

— Ֆրանսիայի Դիւսօ հնարել է մի նոր գործիք, որով յոյս ունին վերադարձնել խուլերին լսելու ընդունակութիւնը. Այդ գործիքը մի սրամիտ բարդութիւն է ներկայացնում Mikrophon (մանրաձայն) և Phonograph (ձայնագիր) գործիքների. Դր. Ժիլէ ցոյց էր տուել արդէն շատ փորձերով, թէ ինչպիսի բարերար ազդեցութիւն է անում ֆոնօգրաֆը ի ծնէ խուլ մանուկների վերայ. նոքա ամեն տեսակ կենդանի նշաններով ցոյց էին տալիս, որ զգացողութեան մի նոր աշխարհ է բացւում իրենց համար. Նոր գործիքը այդ ազդեցութիւնն այնչափ զօրացնում է, որ պէտք է ենթադրել թէ ամեն տեսակ խուլեր նորա միջոցով կանոնաւորապէս լսել, ուրեմն և խօսել պիտի կարողանան.

Յայտնի եգիպտագէտ Ամելինօն մի շատ նշանաւոր գիւտ է արել վերջերս. Նա գտել է Նեղոսի հովտում եգիպտացւոց Օզիրիս աստուծոյ դամբարանը, որի մասին եգիպտ. ամենահին գրուածքների մէջ շատ տեղեկութիւններ կային և որը գտնելու համար մինչև այժմ ուրիշ գիտնականների գործ դրած ջանքը զուր է եղել. Այս գիւտը նոր նշանակութիւն է տալիս եգիպտ. հնագոյն զրոյցներին, որոնք նախնական թագաւորական հարստութիւններին աստուածային ծագումն են վերագրում. Ինչպէս յայտնի է, Եգիպտոսում Օզիրիսը արեգակի մարմնացումն էր համարւում.

—Պետերբուրգում սկսել է լոյս տեսնել մի նոր թերթ—Журналъ Журналовъ и Энциклопедическаго Обозрѣнія, որի նպատակն է ժամանակակից քաղաքակրթական շարժումների, մասնագիտական նորանոր տեսութիւնների, նոր գիւտերի, և գաղափարի ու մտքի նորանոր ուղղութեանց մասին ամբողջական, կապակցեալ մի պատկեր ընծայել, որպէս զի ընթերցողը կարողանայ որոշ գաղափար կազմել, թէ ինչ գործունէութիւն և յառաջադիմութիւն տեղի ունի ժամանակակից մտքի աշխարհում, ինչպէս է զարգանում և ճանապարհ բանում ճշմարտութիւնը. Առաջին համարի մէջ յայտնի Քիմիկոս պրոֆ. Մենդելեեվ մի յօդուած է գրել, որով կասկած է յայտնում արծաթը ոսկիի փոխելու համար արած փորձերի նկատմամբ.

—Ֆենովայի պրոֆեսորներից մէկը Revue des Revues հանդիսի մէջ գրած մի յօդուածով ապացուցանում է, որ Ամերիկայի գիւտի իսկական հեղինակը Ֆլորենցայի մի գիտնական է, Պաօլո Տոսկանելլի անունով։ Պորտուգալիայում արդէն ծրագիր էր կազմուում մի նոր, ուղիղ գծով հաղորդակցութիւն հաստատելու Եւրոպայի և Ասիայի ափերի մէջ, փոխանակ Աֆրիկայի հարաւային կողմով շրջան առնելու՝ երբ պատահմամբ, նաւակոծութեան հանդիպելով, այնտեղ եկաւ Քր. Կոլոմբոս։ Նա այստեղ տեղեկացաւ, որ Ֆլորենցայի նշանաւոր բժիշկ և աշխարհագրագէտ Տոսկանելլին ունի շատ հմուտ կերպով կազմուած մի ծրագիր դէպի արևմուտք ճանապարհորդութեան համար։ բանակցութեան մէջ մտաւ նորա հետ։ ստացաւ նորանից քարտէզներ և կարևոր հրահանգներ։ որոնցով առաջնորդուելով և կարողացաւ իւր մեծ գիւտն անել։ Տոսկանելլին այդ ժամանակ արդէն մեռած էր։ ուստի և նորա գաղը պաշտպանող չեղաւ ու նա մնաց անյայտ։ Այդ անուան ասպարէզ գալն այժմ այն նշանակութիւնն ունի։ որ Ամերիկայի գիւտն այլ ևս իբրև մի համարձակ քայլի հետևանք կամ բաղդի բերմունք պէտք է չհամարուի։ այլ վերածնութեան դարում սկսուած գիտնական լուրջ աշխատութեան արդիւնք։

* * *

ՍՈՒՐ ՄՏՔԵՐ։

Առանձնութիւնը այնպիսի վայելք է։ որ ոչ ոքի հետ բաժանել չի կարելի։

Ոսկւով ծախած խօսքերը ոսկէ խօսքեր չեն լինում։

Շատ մարդիկ կարծում են՝ առաքինութիւնն ուրիշ ոչինչ է։ բայց եթէ խիստ լինել դէպի օտարները։

Շատերը բաղդը ձեռքից բաց են թողնում՝ բաղդ որոնելու համար։

Թշնամիներին մարդ աւելի է յիշում։ քան բարեկամներին։

Ցեխոտ փողոցով անցնելիս։ ինչքան և դու ինքըդ զգոյշ լինիս՝ ուրիշները քեզ կցեխոտեն։

Եթէ մենք ինքներս այնչափ շատ պակասութիւններ չունենայինք՝ այնպիսի մեծ զուարճութիւն չէր պատճառի մեզ ուրիշների մոտ պակասութիւններ գտնելը։

Ամենալաւ մխիթարութիւնը օգնութիւնն է։

Ամենաբաղդաւորները նոքա են։ որոնք բաղդի կարիք չունին։

Որչափ մարդու հաստատակամութիւնը պակասում է։ այնչափ աւելանում է կնոջ զօրութիւնը։

Համեստ մարդիկ յաճախ օտարների նախանձի պատճառով են սկսում ուշադրութիւն դարձնել իրենց առաւելութիւնների վերայ։

Որչափ շատ բան կայ մէկի մէջ՝ նոյնչափ շատ գտնում է նաև ուրիշների մէջ։

Համեմատիր ունեցածդ ուրիշների ունեցածի հետ՝ բաղդ կայ։ որ կաւելացնես։ բաղդ կայ։ որ կկորցնես։

Կան սիրուն ծաղիկներ ճանապարհի վերայ ծաղկած։ որոնցով ոչ ոք չի հետաքրքրուում. բայց եթէ տանես ժայռերի գլխին ու ձորերի խորքում տնկես՝ շատերը շլինք կկոտրեն ձեռք բերելու համար։

Ա. Իմ գանձը իմ գիտութիւնն է։—Բ. Ո՞րտեղ էք թաղել ուրեմն այդ գանձը։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՔԱՐՈԶՔ ՄԵՐ ՄԷՋ.

Տարուայ այն օրերն են։ երբ մեր եկեղեցւոյ բեմից եւս։ թէպէտ ղժբաղդաբար ոչ ամեն տեղ՝ քարոզ է լսուում։ Ցանկալի էր և հարկէ։ որ Տիրոջ կենդանի խօսքի քարոզութիւնը Իւր տաճարներից երբէք։ տարուայ ոչ մի ժամանակ։ պակաս չլինէր. սակայն զոհ լինինք առայժմ այս սակաւ օրերով եւ հարցնենք՝ արդեօք ի՞նչ չափով գոնէ այդ սահմանափակ շրջանի մէջ քարոզի պահանջը լրումն է գտնում մեզանում։

Պէտք է խոստովանենք։ որ մենք ինքներս այնչափ փորձառութիւն եւ ընդարձակ ծանօթութիւններ չունինք։ որ կարողանայինք բազմակողմանի կերպով քննադատել եղածը։ թերութիւններն ու զեղծումները ցոյց տալ եւ ուղիղ ճանապարհ գծել. բայց այդ չի արգելում՝ անշուշտ։